ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ FCM/ԱՓԿ N __

ք. Երևան **«____» «_____» _____թ.**

«Ֆյուչր Կապիտալ Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (գործունեության հասցե՝ ՀՀ, 0010 ք. Երևան, Բյուզանդի 1, տարածք 50, ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա՝ ՆԸ թիվ 0004, տրված ՀՀ Կենտրոնական բանկի կողմից՝ 27.06.2008թ., արժեթղթերի փաթեթի կառավարման գծով գործունեություն իրականացնելու լրացուցիչ ներդրումային ծառայություն մատուցելու լիցենզիա՝ տրված ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 25.11.2016թ. թիվ 205 Ա որոշմամբ), այսուհետև Փաթեթի Կառավարիչ՝ ի դեմս գործադիր տնօրեն Արեն Հակոբյանի, որն առաջնորդվում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և դրանից բխող այլ նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Փաթեթի Կառավարչի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով,

մի կողմից, և _____,

(Ա.Ա.Հ. և անձնագրային տվյալներ (եթե իրավաբանական անձ է, ապա կազմակերպության անվանումը և լիազորված անձի Ա.Ա.Հ.-ն և անձնագրային տվյալները))

այսուհետև Հիմնադիր, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Հիմնադիրը Փաթեթի Կառավարչին է հանձնում իրեն սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը և/կամ արժեթղթերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցները (այսուհետ՝ Ակտիվներ), իսկ Փաթեթի Կառավարիչը պարգևավճարի դիմաց պարտավորվում է իրականացնել տվյալ Ակտիվների կառավարում՝ ի շահ Հիմնադրի և/կամ վերջինիս կողմից նշված անձի (շահառուի): Ակտիվների հանձնումը Փաթեթի Կառավարչին հավաստվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող «Ակտիվների հանձնման-ընդունման ակտ»-ով (հավելված 1): Արժեթղթերի փաթեթի կառավարման նպատակն Ակտիվների օգտագործումից և տնօրինումից առավելագույն եկամուտ ստանալն է:

1.2. Ակտիվներն արժեթղթերի փաթեթի կառավարման հանձնելը չի հանգեցնում Փաթեթի Կառավարչին դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանը:

1.3. Փաթեթի Կառավարիչն Ակտիվների կառավարումն իրականացնում է անձամբ: Փաթեթի Կառավարիչը կարող է այլ անձի հանձնարարել իր անունից կատարելու Ակտիվների կառավարմանն ուղղված անհրաժեշտ գործողություններ՝ նախապես ստանալով Հիմնադրի գրավոր համաձայնությունը: Այս դեպքում Փաթեթի Կառավարիչն իր ընտրած անձի գործողությունների համար պատասխանատու է այնպես, ինչպես իր սեփական գործողությունների համար:

1.4. Սույն պայմանագրով շահառու է Հիմնադիրը, որն իրավունք ունի Փաթեթի Կառավարչի հետ կնքված լրացուցիչ համաձայնագրով որպես շահառու նշանակել այլ անձի:

1.5. Սույն պայմանագրով Հիմնադրի կողմից Փաթեթի Կառավարչին հանձնված Ակտիվների կառավարման արդյունքում ստացվող արժեթղթերը և/կամ դրամական միջոցները (այդ թվում՝ շահութաբաժինները, արժեկտրոնային եկամուտները և արժեթղթերով գործարքներից ստացված այլ եկամուտները), առանց սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու, Փաթեթի Կառավարչի կողմից ստանալու պահից դառնում են արժեթղթերի փաթեթի կառավարման օբյեկտ:

1.6. Մինչև սույն պայմանագրի կնքումը՝

1.6.1. Հիմնադիրը Փաթեթի Կառավարչին է տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն ներդրումային գործունեության բնագավառում Հիմնադրի գիտելիքների և փորձի, նրա ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին, և ներկայացված տեղեկությունները հավաստի են ու պատշաճ:

1.6.2. Հիմնադիրը Փաթեթի Կառավարչի կողմից դասակարգվել է որպես պրոֆեսիոնալ/ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ, և գիտակցում է այդ դասակարգման իրավական հետևանքները:

1.6.3. Հիմնադիրը ծանոթացել է արժեթղթերի փաթեթի կառավարման գործունեությունը կարգավորող իրավական ակտերին, այդ թվում՝ Փաթեթի Կառավարչի «Արժեթղթերի փաթեթի կառավարման կանոնակարգ»-ին (այսուհետ՝ Կանոնակարգ): Մասնավորապես, Հիմնադիրը կարդացել և հասկացել է Կանոնակարգի 9-րդ գլխում ներկայացված՝ արժեթղթերի փաթեթի կառավարման գործառնությունների հետ կապված ռիսկերի մասին տեղեկատվությունը, լսել և ընկալել է ռիսկերի բոլոր տեսակների մասին բերված բանավոր օրինակներն ու մանրամասն բացատրությունները, ինչպես նաև գիտակցում ու ընդունում է Ակտիվների՝ կառավարմանը հանձնելու հետ կապված իրական ռիսկերը:

1.6.4. Փաթեթի Կառավարիչը Հիմնադրին է տրամադրել Փաթեթի Կառավարչի և վերջինիս կողմից մատուցվող ներդրումային ծառայությունների, արժեթղթերի տեսակների և հնարավոր ռիսկերի, գործարքի կնքման վայրի, ծառայությունների մատուցման ընթացքում առաջացող ծախսերի և միջնորդավճարների մասին, ինչպես նաև «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով (այսուհետ նաև՝ Օրենքներ) և Կանոնակարգով սահմանված այլ տեղեկություններ:

1.6.5. Հիմնադիրը հաստատում է, որ բոլոր ֆինանսական միջոցները, որոնք մուտքագրվելու են Փաթեթի Կառավարչի կողմից բացված հաշիվներին, ստացված են օրինական ճանապարհով և որևէ կերպ կապված չեն փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի տարածման, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

1.6.6. Հիմնադիրը հավաստիացնում է, որ ծանոթ է Փաթեթի Կառավարչի պատվերների կատարման քաղաքականությանը և տալիս է իր նախնական համաձայնությունն այդ քաղաքականությունն իր նկատմամբ կիրառելու վերաբերյալ:

1.7. Փաթեթի Կառավարիչն արժեթղթերի փաթեթի կառավարման գործունեությունն իրականացնում է համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող ներդրումային հայտարարագրի (հավելված 2), որն արտացոլում է Հիմնադրի Ակտիվների կառավարման ու ներդրման ուղղությունները (ներդրումային ռազմավարությունը), ինչպես նաև ներդրումային պորտֆելի կառուցվածքը: Ներդրումային հայտարարագրի ստորագրմամբ՝ Հիմնադիրը տալիս է Ակտիվների կառավարման համար անհրաժեշտ ցուցումներ:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

2.1. Սույն պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է մինչև «__» «_____» _____թ. ներառյալ:

2.2. Եթե սույն պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն 10 (տաս) օր առաջ կողմերից ոչ մեկը գրավոր չի տեղեկացնում մյուս կողմին պայմանագիրը դադարեցնելու իր պատրաստակամության մասին, ապա սույն պայմանագրի հիման վրա առաջացած իրավահարաբերությունները շարունակվում են, իսկ պայմանագիրը համարվում է երկարաձգված ևս մեկ տարի ժամկետով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Հիմնադիրն իրավունք ունի՝

3.1.1. Փաթեթի Կառավարչի հետ կնքված լրացուցիչ համաձայնագրի հիման վրա շահառու նշանակել երրորդ անձի,

3.1.2. իր անձնական վիճակից ելնելով, ինչպես նաև սեփական ուսումնասիրությունների հիման վրա՝ պահանջել ներդրումային հայտարարագրի վերանայում,

3.1.3. սույն պայմանագրի գործողության ընթացքում ավելացնել կառավարմանը հանձնված Ակտիվները: Լրացուցիչ հանձնվող (ավելացվող) Ակտիվների փոխանցումը հաստատվում է հանձնման-ընդունման ակտով,

3.1.4. իր հայեցողությամբ, սույն պայմանագրի գործողության ընթացքում իրականացնել Ակտիվների մասնակի դուրսբերում՝ Փաթեթի Կառավարչին ներկայացնելով Կանոնակարգով սահմանված գրավոր դիմում, որի բավարարումից հետո կնքվում է Ակտիվների մասնակի դուրսբերումը հավաստող՝ Ակտիվների հանձնման-ընդունման ակտ,

3.1.5. միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը՝ Փաթեթի Կառավարչին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու և Փաթեթի Կառավարչի կողմից, սույն պայմանագրին առնչվող՝ փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով,

3.1.6. օգտվել ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, Օրենքներով, Կանոնակարգով և սույն պայմանագրով սահմանված այլ իրավունքներից:

3.2. Հիմնադիրը պարտավոր է՝

3.2.1. Սույն պայմանագրի 1.6.1. ենթակետով ներկայացված տեղեկությունների փոփոխության դեպքում, որոնք հանգեցնում են Հիմնադրի պահանջների փոփոխությանը, Կանոնակարգով սահմանված կարգով տեղեկացնել Փաթեթի Կառավարչին՝ փոփոխության մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում,

3.2.2. տեղեկացնել Փաթեթի Կառավարչին փաթեթի կառավարմանը հանձնված Ակտիվների գրավադրված կամ փոխառությամբ վերցրած լինելու մասին,

3.2.3. միջոցներ ձեռնարկել Ակտիվների նկատմամբ սույն պայմանագրով սահմանված Փաթեթի Կառավարչի իրավասությունները Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայում, Հաշվի օպերատորի կամ արժեթղթերի որևէ պահառուի մոտ հաշվառելու համար (մասնավորապես, Հիմնադրի անունով բացել համապատասխան հաշիվներ, լիազորել Փաթեթի Կառավարչին՝ տնօրինելու հաշվում առկա արժեթղթերը, ինչպես նաև կատարել այլ գործողություններ),

3.2.4. իր անձնագրային, հաշվառման (բնակության) վայրի, ինչպես նաև բանկային վավերա-պայմանների փոփոխության դեպքում այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցել Փաթեթի Կառավարչին,

3.2.5. սույն պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում Փաթեթի Կառավարչին վճարել պարգևավճար և հատուցել վերջինիս կողմից կատարված՝ սույն պայմանագրին առնչվող բոլոր անհրաժեշտ ծախսերը,

3.2.6. Փաթեթի Կառավարչին տրամադրել իր այն փաստաթղթերը կամ տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են Փաթեթի Կառավարչին իր պարտավորությունների պատշաճ կատարման համար (ոչ ուշ, քան Փաթեթի Կառավարչի կողմից անհրաժեշտ տեղեկությունները պահանջող դիմումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում),

3.2.7. պահպանել սույն պայմանագրի հետ կապված տեղեկությունների գաղտնիությունը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

3.2.8. կատարել ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, Օրենքներով, Կանոնակարգով և սույն պայմանագրով սահմանված այլ պարտականություններ:

3.3. Փաթեթի Կառավարիչն իրավունք ունի՝

3.3.1. Ակտիվների նկատմամբ կատարել ներդրումային հայտարարագրի շրջանակներում և սույն պայմանագրի 1.1. կետի վերջին նախադասությամբ ամրագրված նպատակին հասնելու համար իրավաբանական և փաստացի ցանկացած գործողություն, այդ թվում՝ գրավադրել այդ Ակտիվները,

3.3.2. ստանալ պարգևավճար՝ սույն պայմանագրի 5-րդ գլխի համաձայն,

3.3.3. արժեթղթերի փաթեթի կառավարման իրականացման հետ կապված անհրաժեշտ ծախսերը վճարել (գանձել/պահել) անակցեպտ հիմունքներով՝ կառավարմանը հանձնված կամ կառավարման արդյունքում ստացված միջոցների հաշվին,

3.3.4. Օրենքների, Կանոնակարգի և սույն պայմանագրի շրջանակներում իրականացնել Ակտիվների նկատմամբ սեփականատիրոջ լիազորություններ,

3.3.5. միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը՝ Հիմնադրին ոչ ուշ, քան 30 օր առաջ տեղեկացնելու և վերջինիս վնասները լրիվ հատուցելու պայմանով,

3.3.6. օգտվել ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, Օրենքներով, Կանոնակարգով և սույն պայմանագրով սահմանված այլ իրավունքներից:

3.4. Փաթեթի Կառավարիչը պարտավոր է՝

3.4.1. սույն պայմանագրի գործողության ընթացքում գործել բացառապես Հիմնադրի շահերից ելնելով (ֆիդուցիար պարտականություն), ցուցաբերել պատշաճ հոգատարություն և բարեխղճություն՝ ներդրումային հայտարարագրի շրջանակներում շահառուի համար հնարավորինս լավ արդյունք ապահովելու նպատակով,

3.4.2. փաթեթի կառավարումն իրականացնել բացառապես ներդրումային հայտարարագրի դրույթներին համապատասխան,

3.4.3. սույն պայմանագրի 3.3.1. կետով սահմանված իրավունքն իրագործելով՝ հաշվի առնել ՀՀ գործող օրենսդրությամբ և Կանոնակարգով Փաթեթի Կառավարչի գործողությունների նկատմամբ նախատեսված սահմանափակումները,

3.4.4. Ակտիվների կառավարման շրջանակներում գործարքները կնքել իր անունից՝ նշելով, որ գործում է որպես Փաթեթի Կառավարիչ: Այդ պայմանը համարվում է պահպանված, եթե գրավոր ձևակերպում չպահանջող գործողությունները կատարելիս Փաթեթի Կառավարիչը մյուս կողմին տեղեկացրել է որպես Փաթեթի Կառավարիչ՝ դրանք կատարելու մասին, իսկ գրավոր փաստաթղթերում Փաթեթի Կառավարչի անվանումից հետո արվել է «Փ. Կ.» նշումը,

3.4.5. Ակտիվներն առանձնացնել իր ակտիվներից (արժեթղթերից ու դրամական միջոցներից) և դրանց հաշվառումն իրականացնել իր ակտիվներից առանձին,

3.4.6. իր գտնվելու վայրի և բանկային վավերապայմանների փոփոխության դեպքում այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցել Հիմնադրին,

3.4.7. Հիմնադրի առաջին իսկ պահանջով նրան տրամադրել (առաքել փոստով կամ փոխանցել առձեռն) անկախ աուդիտորի կողմից հաստատված Փաթեթի Կառավարչի տարեկան ֆինանսական հաշվետվությունների պատճենը՝ վավերացված Փաթեթի Կառավարչի կնիքով և «իսկականի հետ ճիշտ է» նշագրմամբ,

3.4.8. ցանկացած պահին Հիմնադրի պահանջով (պահանջի առկայության դեպքում՝ պահանջը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում), ինչպես նաև յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, Հիմնադրին էլեկտրոնային փոստով, փոստով կամ առձեռն տրամադրել արժեթղթերի փաթեթի կառավարման մասին հաշվետվություն՝ Կանոնակարգով սահմանված ձևին համապատասխան,

3.4.9. արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում կնքված յուրաքանչյուր գործարքի մասին մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը Հիմնադրին

էլեկտրոնային փոստով, փոստով կամ առձեռն տրամադրել հաշվետվություն՝ Կանոնակարգով սահմանված ձևին համապատասխան,

3.4.10. առնվազն 7 տարվա ընթացքում պահպանել սույն պայմանագիրը և դրա հիման վրա արժեթղթերով կատարված գործարքների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը և Հիմնադրի առաջին իսկ պահանջով նրան տրամադրել դրանց պատճենները՝ վավերացված Փաթեթի Կառավարչի կնիքով և «իսկականի հետ ճիշտ է» նշագրմամբ,

3.4.11. պահպանել սույն պայմանագրի հետ կապված տեղեկությունների գաղտնիությունը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

3.4.12. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Հիմնադրի կրած վնասները, եթե Փաթեթի Կառավարչի կողմից պատշաճ հոգատարություն և բարեխղճություն չցուցաբերվելու հետևանքով կատարվել են Հիմնադրի շահերին վնասող գործողություններ,

3.4.13. սույն պայմանագիրը լուծելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Հիմնադրին փոխանցել վերջինիս պատկանող արժեթղթերն ու դրամական միջոցները, բացառությամբ այն Ակտիվների, որոնք Փաթեթի Կառավարչի՝ երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերի ուժով ենթակա են վերադարձման ավելի ուշ ժամկետի ընթացքում. ընդ որում, նշված Ակտիվները վերադարձվում են Հիմնադրին Փաթեթի Կառավարչի կողմից դրանք երրորդ անձանցից ստանալուն զուգընթաց, դրանցից յուրաքանչյուրի ստացումից 1 աշխատանքային օրվա ընթացքում,

3.4.14. կատարել ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, Օրենքներով, Կանոնակարգով և սույն պայմանագրով սահմանված այլ պարտականություններ:

4. ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Փաթեթի Կառավարչի կողմից կառավարվող Ակտիվները, ինչպես նաև դրանց օգտագործման հետևանքով ստացված շահույթը չի կարող գրավ դրվել կամ բռնագանձվել Փաթեթի Կառավարչի պարտքերի դիմաց:

4.2. Փաթեթի Կառավարչի սնանկացման կամ անվճարունակության, ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի դադարեցման դեպքում Հիմնադրի կողմից Փաթեթի Կառավարչին հանձնված Ակտիվները և դրանց կառավարման հետևանքով առաջացած շահույթն առանձնացվում են Փաթեթի Կառավարչի գույքից և վերադարձվում Հիմնադրին՝ վերջինիս առաջին իսկ պահանջով:

5. ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐԸ

5.1. Սույն պայմանագրով նախատեսված՝ փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման դիմաց Հիմնադիրը վարձատրում է Փաթեթի Կառավարչին՝ համաձայն վերջինիս կողմից հաստատված սակագների (պարգևավճարի հաշվարկման կարգը ներկայացված է հավելված 3-ում):

5.2. Փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման դիմաց Հիմնադրից գանձվող պարգևավճարի հաշվարկման կարգը հրապարակված է Փաթեթի Կառավարչի՝ www.fcm.am ինտերնետային կայքում: Մինչև սույն պայմանագրի կնքումը Հիմնադիրը ծանոթացել է վերոնշյալ սակագների հետ:

5.3. Փաթեթի Կառավարիչն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել սակագները՝ Հիմնադրին այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն 20 աշխատանքային օր առաջ ծանուցելու պայմանով:

5.4. Սակագների փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքում, մինչև նոր սակագների ուժի մեջ մտնելը, Հիմնադիրը կարող է միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը: Այս դեպքում Փաթեթի Կառավարչի և Հիմնադրի միջև հաշվարկները կատարվում են նախկին սակագներին համապատասխան:

5.5. Պարգևավճարը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրվա և/կամ սույն պայմանագրի դադարեցման օրվա դրությամբ, և վճարվում է յուրաքանչյուր ամսվա ավարտից կամ սույն պայմանագրի դադարեցումից առավելագույնը 1 ամսվա ընթացքում:

5.6. Պարգևավճարը, ինչպես նաև Փաթեթի Կառավարչի կողմից կատարված՝ սույն պայմանագրին առնչվող բոլոր այլ անհրաժեշտ ծախսերը, Հիմնադրի կողմից փոխանցվում են Փաթեթի Կառավարչի կողմից նշված դրամական հաշվին կամ Փաթեթի Կառավարչի կողմից անակցեպտ հիմունքներով գանձվում են Հիմնադրի Ակտիվներից:

5.7. Առանձին դեպքերում, հաշվի առնելով Հիմնադրի գործարար համբավը, Փաթեթի Կառավարչի հետ համագործակցության ժամանակահատվածը և հաճախականությունը, ինչպես նաև այլ առանձնահատկություններ, Հիմնադրին կարող են առաջարկվել արտոնյալ պայմաններով սակագներ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Կողմերի միջև կապն իրականացվում է հեռախոսով, փոստով, էլեկտրոնային փոստով, ինչպես նաև անձնական հանդիպումների միջոցով՝ սույն պայմանագրի 11-րդ գլխում նշված հասցեներով: Հիմնադիրը հավաստում է, որ սույն կետում նշված կապի միջոցներն իր համար հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Սույն պայմանագրից բխող կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7.2. Կողմերը պատասխանատվություն չեն կրում, եթե պայմանագրի դրույթները խախտվել են անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժորի) հետևանքով:

7.3. Հիմնադիրը տեղեկացված է, որ արժեթղթերում ցանկացած ներդրում իր բնույթով հանդիսանում է ռիսկային, ինչը կարող է հանգեցնել Հիմնադրի Ակտիվների մասնակի կամ ամբողջական կորստի: Այդ կապակցությամբ Հիմնադիրը համաձայնվում է չներկայացնել Փաթեթի Կառավարչին գույքային և ոչ գույքային բնույթի պահանջներ՝ իր կողմից Ակտիվների կառավարման համար տրված անհրաժեշտ ցուցումների և/կամ Փաթեթի Կառավարչի կողմից ներդրումային հայտարարագրին չհակասող գործողությունների կատարման արդյունքում առաջացած վնասների համար:

7.4. Հիմնադիրը պատասխանատվություն է կրում իր մեղքով, ժամանակին չներկայացված կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև պահանջվող փաստաթղթերի ոչ ժամանակին կամ թերի ներկայացման արդյունքում Փաթեթի Կառավարչին պատճառված վնասների համար:

7.5. Փաթեթի Կառավարիչը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի կողմից սույն պայմանագիրը միակողմանիորեն լուծելու արդյունքում Հիմնադրի կրած վնասների համար:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է

անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Անհաղթահարելի ուժի արդյունք հանդիսացող իրավիճակներ են համարվում տարերային աղետները, վթարները, հրդեհները, զանգվածային անկարգությունները, գործադուլները, ռազմական գործողությունները, սույն պայմանագրում նշված գործունեության տեսակներն ուղղակիորեն կամ անուղղակի ձևով արգելող և կողմերի՝ պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարմանը խոչընդոտող օրենսդրական և նորմատիվ ակտերի, պետական մարմինների որոշումների (հրամանների) օրինական ուժի մեջ մտնելու փաստերը, Ակտիվների կազմում ընդգրկված արժեթղթերի շուկայական գնի կտրուկ փոփոխությունը, պարտքային արժեթղթերի դեպքում՝ թողարկողի կողմից արժեթղթերի մարման իր պարտավորությունը չկատարելը, ինչպես նաև կողմերի կամքից անկախ այլ իրադարձությունները:

8.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին: Այս դեպքում կողմերից ոչ մեկն իրավունք չունի մյուս կողմից ծախսերի փոխհատուցում պահանջել:

8.3. Պայմանագրի այն կողմը, որը չի կարող կատարել իր պարտականությունները՝ կապված անհաղթահարելի ուժի ազդեցության հետ, պարտավոր է այդ մասին, անհաղթահարելի ուժի ի հայտ գալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, ծանուցել մյուս կողմին այդ իրավիճակի առաջացման, դրա հնարավոր ժամկետների և ավարտի մասին:

8.4. Պայմանագրի 8.3. կետում նշված պայմանի չկատարման դեպքում կողմերը զրկվում են նման իրավիճակների վրա հղում կատարելու իրավունքից:

8.5. Անհաղթահարելի ուժի աղդեցության վերացումից հետո կողմերը շարունակում են սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարումը:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են երկկողմ համաձայնությամբ, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից՝ հայերեն լեզվով, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:

10.3. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր:

10.4. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում կողմերը պետք է ամբողջությամբ կատարեն պայմանագրի գործողության ընթացքում ի հայտ եկած իրենց պարտավորությունները:

10.5. Սույն պայմանագրի դադարեցման հիմքերը որոշվում են ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

10.6. Սույն պայմանագրի գործողությունը դադարեցվում է պայմանագրի լուծման կամ դրա գործողության ժամկետի ավարտման պահից: Պայմանագրի գործողության ժամկետի ավարտով դադարում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

10.7. Սույն պայմանագրով չկարգավորվող հարաբերությունները կանոնակարգվում են ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, դրա հիման վրա ընդունված ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և Կանոնակարգով:

11. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փաթեթի Կառավարիչ	Հիմնադիր
«Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ	անուն, ազգանուն
ՀՀ, 0010 ք. Երևան, Բյուզանդի 1, տարածք 50	հասցե
ՀՎՀՀ՝ 00090674	անձնագրային տվյալներ
h/h 1510001932101300	h/h
Գործադիր տնօրեն	կապի միջոցներ
Ա. Հակոբյան _____	_____

Կ. Տ.

Հավելված 1

ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

ք. Երևան «____» «_____» ____թ.

Համաձայն արժեթղթերի փաթեթի կառավարման FCM/ԱՓԿ N __ պայմանագրի, Հիմնադիրը՝

_____
(Ա.Ա.Հ. և անձնագրային տվյալներ (եթե իրավաբանական անձ է, ապա կազմակերպության անվանումը և լիազորված անձի Ա.Ա.Հ.-ն և անձնագրային տվյալները))

ի դեմս _____, հանձնում/ընդունում է, իսկ
լիազորված անձի Ա.Ա.Հ.-ն և անձնագրային տվյալները

Փաթեթի Կառավարիչ հանդիսացող «Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ-ն՝ ի դեմս գործադիր տնօրեն Արեն Հակոբյանի, որն առաջնորդվում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և դրանից բխող այլ նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Փաթեթի կառավարչի կանոնադրությամբ, ընդունում/հանձնում է հետևյալ Ակտիվները՝

1. արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցներ՝_____ ՀՀ դրամի չափով
2. արժեթղթեր՝

N	Թողարկողի անվանումը	Արժեթղթի տեսակը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (թողարկման համարը)	Քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը՝ ՀՀ դրամ)	Շուկայական արժեքը (ՀՀ դրամ)

Ընդհանուր շուկայական արժեքը ՀՀ դրամով՝ _____

ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

«Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ
ՀՀ, 0010 ք. Երևան, Բյուզանդի 1, տարածք 50
ՀՎՀՀ՝ 00090674
h/h 1510001932101300
Գործադիր տնօրեն

Ա. Հակոբյան _____

Կ. Տ.

ՀԻՄՆԱԴԻՐ

անուն, ազգանուն
հասցե
անձնագրային տվյալներ
h/h
կապի միջոցներ

_____

Հավելված 2

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ N

ք. Երևան «____» «_____» ____թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Ներդրումային Հայտարարագիրը (այսուհետ՝ Հայտարարագիր) սահմանում է Փաթեթի Կառավարչին հանձնված՝ Հիմնադրի Ակտիվների ներդրման նպատակը, ուղղությունները և ներդրումային պորտֆելի կառուցվածքը:

2. ՆԵՐԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Հիմնադրի Ակտիվների ներդրման նպատակն է արժեթղթերի պորտֆելի ձևավորումը և/կամ կառավարումը՝ ուղղված պորտֆելի արժեքի բարձրացմանը:

3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

3.1 Սույն հայտարարագրի գործողության ժամկետը սահմանվում է մինչև «____» «_____» _____թ.:

4. ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1 Փաթեթի Կառավարիչն իրեն հանձնված Ակտիվները կարող է ներդնել հետևյալ ֆինանսական գործիքներում՝

- Բաժնետոմսեր, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթղթեր
- Ներդրումային ֆոնդերի փայեր
- Պետական պարտատոմսեր
- Պետական և կորպորատիվ եվրոպարտատոմսեր
- Դեպոզիտար ստացականներ
- Կորպորատիվ պարտատոմսեր և պարտքային այլ արժեթղթեր
- Ածանցյալ գործիքներ
- Այլ գործիքներ:

4.2 Ակտիվների կառուցվածքը, որը Փաթեթի Կառավարիչը պետք է պահպանի արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի ողջ ժամանակի ընթացքում՝

Ա. Պորտֆելի կառուցվածք

☐ դրամական միջոցներ _____%

☐ արժեթղթեր _____%

Բ. Դրամական միջոցներ

☐ ՀՀ դրամ _____%

☐ ԱՄՆ դոլար _____%

☐ Եվրո _____%

☐ Այլ արժույթ _____%

Գ. Արժեթղթեր

☐ բաժնետոմսեր _____%

☐ պետական պարտատոմսեր _____%

☐ կորպորատիվ պարտատոմսեր _____%

☐ այլ արժեթղթեր _____%

4.3 Հայտարարագրի 4.1 կետով սահմանված ֆինանսական գործիքների ժամկետայնության որևէ սահմանափակում չի սահմանվում:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Այն դեպքում, երբ Ակտիվների շուկայական գնի փոփոխությունը հանգեցնում է Հայտարարագրով սահմանված պայմանների անհամապատասխանության, Փաթեթի Կառավարիչը պարտավոր է Ակտիվների կառուցվածքը համապատասխանեցնել Հայտարարագրով սահմանվածին առավելագույնը 1 ամսվա ընթացքում:

5.2 Արժեթղթերի շուկայական արժեքի գնահատումը կատարվում է ՀՀ դրամով: Արտարժույթով գնանշվող արժեթղթերի շուկայական արժեքը որոշվում է գնահատման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Արժեթղթերի իրական (շուկայական) արժեքի որոշման մեթոդներն են՝

ա. ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերի համար արժեթղթի շուկայական արժեքը հաշվարկվում է հիմք ընդունելով եկամտաբերության կորը,

բ. Կարգավորվող շուկայում ցուցակված արժեթղթերի շուկայական արժեքը հաշվարկվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ այդ արժեթղթերով բորսայում հաստատված վերջին գործարքի գին կամ եկամտաբերություն (փակման գին կամ եկամտաբերություն), եթե գործարքի ամսաթվի և հաշվետու ամսաթվի միջև ժամկետը չի գերազանցում մեկ ամիս:

գ. Այն արժեթղթերի համար, որոնցով կարգավորվող շուկայում գործարքներ չեն իրականացվել կամ վերջին գործարքն իրականացել է ավելի քան մեկ ամիս առաջ, սակայն որոնց համար առկա է շուկա ստեղծող (մարքեթ մեյքեր), շուկայական արժեքը հաշվարկվում է հիմք ընդունելով շուկա ստեղծողի կողմից առաջարկվող տվյալ արժեթղթի գնանշումները: Ընդ որում, երկար դիրքի հաշվարկի ժամանակ հիմք է

ընդունվում այն գինը կամ եկամտաբերությունը, որով արժեթուղթը կարող է վաճառվել, իսկ կարճ դիրքի հաշվարկի ժամանակ՝ այն գինը կամ եկամտաբերությունը, որով տվյալ արժեթուղթը կարող է գնվել:

դ. Այն պարագայում, երբ արժեթղթերի համար կիրառելի չեն շուկայական արժեքի հաշվարկման՝ սույն կետի «ա» - «գ» պարբերություններով սահմանված եղանակները, այսինքն՝ եթե գնանշված շուկայական գինն առկա չէ, այդ դեպքերում արժեթղթերը գնահատվում են հաճախորդի հետ համաձայնեցված մեթոդով՝ գնային մոդելների, զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի, ինչպես նաև շուկայական գնի հաշվարկման համար նպատակահարմար կամ գործնական համարվող այլ մեթոդների միջոցով:

5.3 Իմաստալից հենանիշ է սահմանվում _____:

6. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՖԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ	ՀԻՄՆԱԴԻՐ
«Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ	անուն, ազգանուն
ՀՀ, 0010 ք. Երևան, Բյուզանդի 1, տարածք 50	հասցե
ՀՎՀՀ՝ 00090674	անձնագրային տվյալներ
h/h 1510001932101300	h/h
Գործադիր տնօրեն	կապի միջոցներ
Ա. Հակոբյան _____	_____

Կ. Տ.

«Ֆյուչր կապիտալ մարկետ» ՍՊԸ կողմից փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման դիմաց Կառավարման հիմնադրից գանձվող պարգևավճարի[1] հաշվարկման կարգ

Պարգևավճարը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրվա և/կամ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի դադարեցման օրվա դրությամբ, հետևյալ բանաձևով՝

$$F = \sum_{i=1}^{D} \frac{AV_i}{D} * P\%$$

, որտեղ

F – Պարգևավճարն է,

AV – Կառավարմանը հանձնված Ակտիվների համախառն շուկայական արժեքն է՝ հաշվետու ժամանակաշրջանի i-րդ օրվա վերջում[2] (ՀՀ դրամով[3]),

D – Հաշվետու ժամանակաշրջանի օրերի քանակը,

P – Տարեկան տոկոսադրույքի (մինչև 10%) մեկ տասներկուերորդ մասը:

---

[1] Պարգևավճարը չի ներառում «Ֆյուչր կապիտալ մարկետ» ՍՊԸ կողմից կատարված՝ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրին առնչվող բոլոր այլ անհրաժեշտ ծախսերը:

[2] Առաջին անգամ պարգևավճարի հաշվարկման ժամանակ հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը համընկնում է արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի շրջանակներում Ակտիվների առաջնային մուտքի ամսաթվի հետ:

[3] Արտարժույթով արտահայտված Ակտիվները հաշվարկին մասնակցում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից համապատասխան օրվա համար հրապարակված՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: